

## Տ. ԶԱՎԵՆ ԱԲԵՂԱ ՅԱԶԻՉՅԱՆ

(ավազանի անունը՝ Սարգիս)

Ծնվել է 1981 թ. ապրիլի 20-ին Երևանում:

1988-1996 թթ. նախ սովորել է մայրաքաղաքի Մանվել Քաջունու անվան թիվ 54 միջնակարգ դպրոցում, ապա 1996-1998 թթ.՝ Երևանի օտար լեզուների թեքումով թիվ 149 ավագ-դպրոց վարժարան-քոլեջում:

1999-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2005 թթ. ուսանել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2004 թ. դեկտեմբերի 26-ին՝ Սուրբ Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 25-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տաթև եպիսկոպոս Ճերեճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և ծառայության նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիվանատանը որպես գործավար: